ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուստարում ուսանողների և դասախոսների վերհանված խնդիրների և կարիքների լուծումների վերաբերյալ

/13.04.23թ., տն. նիստ/

2021-22 ուստարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից տարբեր մեխանիզմներով վեր են հանվել դասախոսների և ուսանողների մի շարք խնդիրներ և կարիքներ։

Բաժնում այդ խնդիրները տրոհվել են, խմբավորվել ըստ պատասխանատվության և ընթացիկ 2022-23 ուստարվա սկզբին ուղարկվել են բոլոր ստորաբաժանումներին, որով ստորաբաժանումները կազմել են ներառված խնդիրների լուծման իրենց ծրագրերը՝ նշելով խնդիրների լուծման իրենց քայլերը, ակնկալիքները և ժամկետները։

Այդ խնդիրների պատճառների հստակեցման, դրանց հնարավոր լուծման համար պատասխանատու ստորաբաժանումները կազմակերպել են հանդիպում-քննարկումներ ուսանողների և դասախոսների հետ։

Վեր հանված մի քանի հիմնական խնդիրների և դրանց լուծման համար իրականացվել են համապատասխան գործընթացներ և ձեռք են բերվել որոշակի արդյունքներ, որոնք ՄԿՈԱ բաժինը վեր է լուծել և ներկայացնում է ըստ խնդրի։

1.Խնդիրներ կապված մասնագիտական գրականության համալրման և հետազոտությունների իրականացման համար տվյալների ձեռքբերման հետ։

Այս խնդիրների հետ կապված Մասնաճյուղի գրադարանը ներկայացրել է այն գործընթացները, որոնք ուղղված են եղել մասնագիտական գրականության համալրմանը։ Նշենք, որ Մասնաճյուղի գրադարանը պարբերաբար իրականացնում է իր պաշարների և գրականության պահանջարկի մշտադիտարկում, իրականացնում է հարցումներ՝ գրադարանային ֆոնդը համալրելու և արդիականացնելու համար։ Վերջին տարիներին գրադարանում գործում է պահանջագրի ինստիտուտը, բոլոր ամբիոնները գրադարան են ներկայացրել մասնագիտական գրականության ցանկերը և գրադարանի վարիչի հետ համագործակցության արդյունքում հիմնականում ձեռք է բերվել անհրաժեշտ <u>մասնագիտական գրականությունը</u>։ Միայն 2023թ.-ի ապրիլի սկզբին գրադարանը համալրվել է 132 մասնագիտական գրքով և դասագրքով և գնվել է օտարալեզու 15 միավոր դասագիրք։

Ըստ հավաքագրած տվյալների, մի քանի կրթական ծրագրերի ուսանողների համար <u>էլեկտրոնային գրադարանի պաշարները</u> բավարար չեն։ Գրադարանի վարիչը փաստել է, որ ավելացվել է տվյալ մասնագիտությունների էլեկտրոնային գրքերի քանակը (մասնավորապես, ավելացվել է 9 էլ.գիրք, գնվել է 11 մասնագիտական գիրք)։

Բարելավվել է <u>էլեկտրոնային պաշարների որակը,</u> հիմնականում շտկվել են էլեկտրոնային գրքերի վատ տարբերակները (թվով 5) և փոխարինվել են օրիգինալներով։

Չնայած այն հանգամանքին, որ գրադարանը ձեռք է բերել անհրաժեշտ մասնագիտական գրականություն, և այդ առումով և՛ ուսանողները, և՛ դասախոսները բավարարված են, սակայն խնդիր ունենք գրադարանը և էլ.գրադարանը նեղ <u>մասնագիտական արդի գրականությամբ</u> համալրման հետ կապված։ ՄԿՈԱ բաժնի կողմից 2023թ.-ի փետրվարին անցկացրած «Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության» հարցման արդյունքներով ուսանողները որպես առաջնային խնդիր նորից նշել են գրականության և անհրաժեշտ նյութերի սղությունը և բացակայությունը։

Այդ գրականությունը հիմնականում անհրաժեշտ է հետազոտական աշխատանքների իրականացման համար: Գրադարանի վարիչի հետ քննարկման արդյունքում առաջարկել ենք ամբիոններից վերցնել նաև նման գրականության ցանկ և ֆինանսական հնարավորությունների սահմաններում ձեռք բերել նաև դրանցից (թեկուզ մեկ օրինակ):

Գրադարանի վարիչի ներկայացրած տվյալներով միայն 2023թ.-ի ապրիլի սկզբին գնվել է 30 միավոր նոր հրատարակված մասնագիտական և գեղարվեստական գրականություն:

Ուսանողները և դասախոսները նշում են, որ հետազոտական և ավարտական աշխատանքներում վերլուծություններ կատարելու համար անհրաժեշտ է լինում օգտվել տարբեր **տվյալների բազաներից և կազմակերպությունների հաշվետվություններից**, որոնք հիմնականում հասանելի չեն և առաջարկել են բաժանորդագրվել համապատասխան ռեսուրսներին: Այստեղ պետք է ուրախությամբ նշել, մասնավորապես դասախոսների համար, որ ԵՊՀ-ն տրամադրել է հասանելիություն մի շարք գիտատեղեկատվական և գիտակրթական շտեմարանների:

Իսկ մասնաճյուղի էլ.գրադարանի էջում տեղադրվել են գիտաչափական շտեմարանների մասին թվով 3 տեղեկույթներ և դրանց քանակը պարբերաբար կավելացվի:

Ընթացքի մեջ է էլեկտրոնային գրադարանում գիտական հոդվածների համար նոր բաժին ավելացնելու գործընթացը:

Գրադարանում սպասարկման որակը բարելավելու և անաղմուկ աշխատանքային միջավայր ապահովելու համար նախատեսվում է գրապահոցներն առանձնացնել ընթերցասրահից:

2.Խնդիրներ կապված հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման հետ:

Հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման հետ կապված խնդիրների լուծման համար ամբիոնները և Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը ընթացիկ ուստարում կազմակերպել են մի շարք հանդիպում-քննարկումներ հետազոտական աշխատանք կատարող ուսանողների, հետազոտական աշխատանքների ղեկավարների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ: Ուսանողներին մեկնաբանել են իրենց և ղեկավարների իրավասություններն ու պարտականությունները, հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները, աշխատանքի կազմակերպման ձևերի առանձնահատկությունները, հետազոտական աշխատանքի թեմաների և նրանց պահանջների վերաբերյալ հարցերը, խորհուրդներ են տվել, թե ինչպես ձևակերպել աշխատանքի նպատակը, խնդիրները, հավաքել տվյալներ, կատարել վերլուծություններ և եզրակացություններ և այլն: Նշենք, որ ուսանողների հետ տարված ծավալուն աշխատանքը տվել է իր արդյունքները, ինչի մասին վկայում են հետազոտական աշխատանքի իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքները:

Այստեղ ուսանողների վեր հանած կարևոր խնդիրը կապված է մեկ կիսամյակում երկու հետազոտական աշխատանքի իրականացման հետ: ԿԲԴՎ բաժինը հարցը քննարկել է կրթական ծրագրերի ղեկավարների հետ և նշել է, որ դա կարտահայտվի վերանայված կրթական ծրագրերում:

3. Խնդիրներ կապված պրակտիկաների կազմակերպման ձևի, ժամանակահատվածի, տևողության, ղեկավարների ընտրության հետ:

3.1. Առաջին խնդիրը կապված է մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփման ձևի հետ: Մանկավարժ ուսանողները նշել էին պասիվ պրակտիկայից հետո մեծ ծավալի **թղթապանակի** պատրաստման պահանջի հետ կապված խնդիրը և առաջարկել էին նման թղթապանակ չվարել, այլ ուղղակի կազմակերպել քննարկումներ: Պրակտիկաների

կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժինը կազմակերպել է քննարկումներ ուսանողների հետ՝ հիմնավորելու համար այդ թղթապանակի անհրաժեշտությունը և կարևորությունը: Մասնավորապես, բաժինը նշել է, որ մասնաճյուղում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի պրակտիկաների պահանջներն իրականացվում են ըստ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շարունակական մանկավարժական պրակտիկայի մոդելի և պրակտիկայի **թղթապանակի կիրառման ընթացակարգի, որը հանրապետությունում համարվում է ընդօրինակելի**: Թղթապանակում ամփոփվում են ուսանողների անհատական և թիմային աշխատանքի, իրավիճակային վերլուծության և գործունեության ինքնավերլուծության արդյունքները, ինչը ձևավորում է ապագա մանկավարժի մասնագիտական և մանկավարժական որակները:

3.2. Երկրորդ խնդիրը կապված է **պրակտիկաների անցկացման վայրերի** ընտրության հետ և այն հիմնականում վերաբերում էր Օտար լեզու մասնագիտության պրակտիկաների կազմակերպմանը, որտեղ անհրաժեշտություն կա ընդլայնել գործընկեր կազմակերպությունների շրջանակը, մասնավորապես «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի մասնագիտական պրակտիկան համալսարանից դուրս կազմակերպելու համար, ինչը արդեն լուծված է:

3.3. Երրորդ խնդիրը կապված է **պրակտիկայի ղեկավարի** ընտրության հետ: ՊԿՇՀ բաժինը հետևողական է եղել ամբիոնների կողմից 2022-2023 ուստարվա պրակտիկաների ղեկավարների նշանակման հարցում և ընթացիկ ուսումնական տարում մի շարք կրթական ծրագրերի համար նշանակվել են պրակտիկաների նոր ղեկավարներ:

4. Խնդիրներ կապված ուսանողների գնահատման բազմագործոն համակարգի արդյունավետության բարձրացման, գնահատման օբյեկտիվության և թափանցիկության ապահովման հետ:

Նշենք, որ ուսանողների գնահատման հետ կապված շատ խնդիրներ արդեն լուծվում են 2023թ.-ի սեպտեմբերից ներդրված գնահատման նոր բազմագործոն համակարգի կիրարկմամբ, այդ մասին նշել են ամբիոնները: Դասախոսներն ուսանողների գնահատման համար սկսել են կիրառել Moodle հարթակի գիտելիքի ստուգման մեխանիզմները:

5. Խնդիրներ կապված ուսումնական գործընթացի կազմակերպման հետ, որոնք լուծվել են համապատասխան ամբիոններում:

5.1. Օտար լեզվի 2 կրթական ծրագրերում (Անգլերեն լեզու և գրականություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն) խնդիր ունեինք տեսական դասընթացների հետ կապված, որոնք մատուցվում են 2 լեզուներով: Նոր ուսումնական պլաններով օտար լեզվի 2 կրթական ծրագրերի այդ **դասընթացները առանձնացվել են** և իրականացվելու են որպես անգլերեն և ֆրանսերեն տեսական դասընթացներ:

5.2. Օտար լեզու մասնագիտության ուսանողներն առաջարկել են կրթական ծրագրերում ներառել նոր օտար լեզուներ՝ իսպաներեն, գերմաներեն: Ամբիոնը նշել է, որ նոր ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակով դա հնարավոր չէ իրականացնել, սակայն առաջարկվել է այլընտրանք՝ մասնակցել AMVN կամավորների կողմից իրականացվող անվճար դասընթացներին:

5.3. Ուսանողների խոսակցական և հաղորդակցական կարողությունների զարգացման համար բոլոր մասնագիտական դասընթացներում ներդրվել են լսողական ժամեր և կատարվել են խոսողական և լսողական վարժություններ, կազմակերպվել են մասնագիտական օտար լեզվով

քննարկումներ, բանավեճեր, միջոցառումներ։ Միայն անցած մեկ տարվա ընթացքում անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով իրականացվել են շուրջ 44 միջոցառումներ։

5.4. Մի քանի կրթական ծրագրերում ունեինք ավարտական աշխատանքների թեմատիկայի հետ կապված խնդիրներ, ինչի մասին նշել էին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները։ Ամբիոններում քննարկվել է խնդիրը և այս ուսումնական տարում հատուկ ուշադրություն են դարձվել թեմաների ընտրությանը (խուսափելով ռեֆերատիվ թեմաներից), հանձնարարվել են ավելի գործնական և ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանն ուղղված թեմաներ։ Այդ հարցում ձեռք բերված առաջընթացի մասին կներկայացվի 2023թ.-ի ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո։

5.5. ԻԿՄ կրթական ծրագրի ուսանողների ֆիզիկայից գիտելիքների ձեռքբերման մակարդակը բարձրացնելու համար բարձրագույն մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնը «Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա» առարկայի լաբորատոր և «Միկրոէլեկտրոնիկա» առարկայի վիրտուալ փորձերի համար մշակում է մեթոդական ձեռնարկներ։

<u>Դասախոսների վեր հանած մի քանի խնդիրների լուծումների մասին</u>

1. Ամբիոնները որպես խնդիր ներկայացրել են հետազոտական աշխատանքների ղեկավարների համար լրացուցիչ ժամային բեռնվածություն հատկացնելու հարցը։ Դասախոսները գտնում են, որ **<u>ժամաքանակը բավարար չէ</u>** այդ աշխատանքները պատշաճ ձևով ղեկավարելու համար։ ՈւՄՎ պետը պատասխանել է, որ Մասնաճյուղն առաջնորդվում է ԵՊՀ-ի կողմից հաստատված «Դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմեր»-ով և առայժմ դրա հետ կապված նոր մոտեցումներ չկան, իսկ գնահատման նոր բազմագործոն համակարգով նվազեցվում է դասախոսների լսարանային բեռնվածության ժամերը՝ ավելացնելով ուսանողների հետ աշխատելու ժամաքանակը։

2. Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը առաջարկել էր բացել հոգեբանության լաբորատորիա, այդ գործընթացն ընթացքի մեջ է։

3. Դասախոսներն առաջարկել էին թեթևացնել իրենց բեռնվածությունը՝ գիտությամբ զբաղվելու շատ ժամանակ ունենալու համար։ Ուսումնամեթոդական վարչության պետը նշել է, որ հիմնական դասախոսների զբաղվածությունը մասնաճյուղում իրականացվում է ըստ հաստատված ժամաքանակի և դասերի իրականացումից հետո դասախոսն ունի ազատ գրաֆիկ։

4. Ուսանողների կրթական մի քանի կարևոր խնդիրներ լուծելու շրջանակներում սպորտդահլիճին կից կառուցվել է 2 նոր հանդերձարան, վերանորոգվել է կիրառական արվեստի ֆակուլտետի խեցեգործության աարհեստանոցը, հումանիտար գիտությունների ֆակուլտետում ավելացվել է նոր լսարան, նոր լսարանների անհրաժեշտության խնդիր ունի նաև տնտեսագիտության ֆակոլտետը։

5. Երևանից ժամանող դասախոսների ապահով և հարմարավետ տեղափոխումն ապահովելու համար Մասնաճյուղը ձեռք է բերել նոր, հարմարավետ և ավելի մեծ փոխադրամիջոց։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին